ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ -2025/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Բջջակ պահարանի արտաքին չափսերն են՝ 1081 x 150 x 1064 մմ (L x Խ x Բ), այն ամբողջությամբ պետք է պատրաստված լինի 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Միջնապատերը պետք է լինեն 5 մմ հաստությամբ լամինացված նույն գույնի ՓՏՍ-ից: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Աշխատանքային հարթության եզրերը պետք է հղկված ու մշակված լինեն, առջևի անկյունները կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Բջջակ պահարանը ունի 10 հատ կտրտված, իրարից առանձնացված, անհատական օգտագործման համար նախատեսված բաց բջջակներ, որոնց ներսի չափսերն են՝ 100 x 150 x 950 մմ (L x Խ x Բ): Բոլոր 10 բաժինների վերևի մասում ողջ լայնությամբ և խորությամբ պետք է նախատեսված լինի հետևյալ չափսերի՝ 100 x 150 x 140 մմ (L x Խ x Բ) առանձնացված տեղեր՝ բաց դարակներ երեխաների անձնական փոքրիկ իրերի համար: Բաց դարակների տակից պետք է ամրացված լինի մետաղական երկտեղանի կախիչ: Բջջակ պահարանը պետք է ունենա չորս առանձին փայտյա, կամ մետաղական ոտքեր, ոտքերի առնվազն բարձրությունը 100 մմ: Ոտքերի տակը հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Գույնը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ -2025/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	